№ 101 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 — 1895 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 № 101

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու ցաւի մէջ. Անգլիական պարլամէնտը. Հայոց հարցը և եւրօպական մամուլը. Օրվայ հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Սուրմայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. — ԲՕՐՍԱ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Finis Armeniae.

ԵՐԿՈՒ ՑԱՒԻ ՄԷՋ

Թիւրքիայի հայը գտնվում է երկու մեծ ցաւի մէջ. մէկը՝ Թիւրքական վարչութիւնն է, միւսը՝ հային շրջապատող օտար տարրերը: Մի կողմից վարչութիւնն է վատ, անարդար, կամայական, բռնակալական. միւս կողմից հայի հարևաններն են վայրենի, գազանաբարոյ, թշնամի կուլտուրականութեան:

Եթէ հայի հետ, նրան կից ապրող ազգութիւնները լինէին խաղաղ աշխատանքի, կուլտուրական զարգացման ներկայացուցիչներ, այն ժամանակ նրանք շուտով կը հասկանային միմեանց, կը համակրէին այն ձգտումներին, որոնք նպաստում են ազգերի առաջադիմութեան, կը նպաստէին միմեանց փոխադարձաբար: Այն ժամանակ վարչութեան անբաւարարութիւնը կը լիներ մի ընդհանուր կէտ, որի դէմ ուղղված կը լինէին բոլոր ազգութիւնների համերաշխ բողոքը և դիմադրութիւնը:

Մինչդեռ այժմ ոչ մի նմանութիւն չը կայ այն բանի մէջ, ինչ որ հայն է ցանկանում և ինչ հաճելի է, օրինակ, նրա հարևան քիւրդի համար: Հայը խնդրում է կանոնաւոր, օրինական վարչութիւն, արդար դատաստան, աշխատանք զարգացնելու դիւրութիւններ, կեանքի, կրօնի և լեզուի կատարեալ ապահովութիւն. քիւրդը, ընդհակառակը, գոհ է ներկայ անկարգ վիճակից, երբ վայրենի ձգտումները և հակումները նպաստաւոր հող են գտնում իրանց անզուսպ արտայայտութեան համար:

Եւ ներկայ Թիւրքական վարչութիւնը, լինելով իր էութեամբ բռնապետական, վատ և անարդար, աւելի ևս վատթարանում է այն պատճառով, որ նա խրախուսում է հակակուլտուրական տարրերին՝ խեղդել ամեն մի կանոնաւոր և խելացի կեանք և գործնականապէս ջնջել, կոտորել այն բոլոր ազգերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ Թիւրքաց վարչութեան անարդ նպատակներին:

Եւ դեռ երկար ժամանակ, երբ մինչև իսկ բարեփոխված կը լինի ներկայ վարչական սիստեմը, հայը ստիպված կը լինի անընդհատ և տոկուն կռիւ մղել իր հարևանների վայրենի հակումների, հակակուլտուրական ձգտումների և խորին ագիտութեան դէմ: Եւ երկար ժամանակ այդ հարևանները պէտք է թուլացնեն փոքր-Ասիայի ընդհանուր զարգացման, բարեկեցութեան, բարգաւաճման գործը՝ խոչընդոտ դառնալով աւելի արագ և կանոնաւոր առաջադիմութեան:

Բայց չը նայելով բոլոր դժուարութիւններին, որ ունի այդ տեսակ մի երկարատև, մաշող գործունէութիւն, Թիւրքահայը ուրախութեամբ յանձն կառնի կատարել այդ գործը. հարկաւոր է միայն, որ նա ինքը շուտով կարողանայ ազատվել ներկայ թշուառ և անարդ վիճակից և սկսի ազատ շունչ քաշել:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

(Սեպտեմբերի 3-ի նիստը)

Պատգամաւոր Գիբսոն Բաուլս. «Ի՞նչ դրութեան մէջ են հայկական ծրագրի ընդունելու հետ կապված գործերը, երեք մեծ պետութիւնների և, բացի այդ, Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի վերաբերմունքը դէպի հայկական խնդիրը:»

Մինիստրի օգնական Քըրզօն. «Թիւրքաց կառավարութիւնից մենք ստացել ենք չատ հաղորդագրութիւններ, որոնց գլխաւոր կէտերը արդէն ճիշդ կերպով ազագրվել են լրագիրների մէջ: Դժդաղդաբար, այդ հաղորդագրութիւնները անբաւարար են: Ինչ վերաբերում է յիշեալ երեք մեծ պետութիւններին, թէև նրանք պաշտօնապէս չեն պաշտպանել ծրագիրը, բայց համակրութեամբ են վերաբերվում ծրագրին և մանաւոր կերպով խորհուրդ են տուել Թիւրքային ընդունել ծրագիրը:»

Բաուլս. «Ի՞նչ հիմք ունի կառավարութիւնը հաստատելու, որ երեք պետութիւնները նպաստաւոր կերպով են նայում ծրագրին:»

Քըրզօն. «Ես չէի յայտնի այդ մասին, եթէ հիմք չունենայի (լսեցէք, լսեցէք):»

Բաուլս. «Կարող էք այդ հիմունքները ներկայացնել այժմ:»

Քըրզօն. «Ոչ, պարոն, ի հարկէ ոչ:»

Բաուլս. «Ո՞րքան ճիշդ է «Novosti» («Новости») լրագրի հաղորդած լուրը, թէ հասել է ժամանակը, որ երեք պետութիւնները մի ծովային միացեալ ցոյց անեն Դարդանելում և ինչ մանակցութիւն ունի այդտեղ մեր կառավարութիւնը:»

Քըրզօն. «Յիշեալ լրագիրը պաշտօնական չէ և մեր կառավարութիւնը այդպիսի առաջարկութիւն չէ ստացել: Եւ ցանկալի չէ, որ հրապարակական քննութեան հարց դառնայ այնպիսի մի գործ, որի մասին կարելի է խօսել միայն այն ժամանակ, երբ պատրաստ ես գործ սկսելու:»

Ուիլսոն. «Ի՞նչ տեղեկութիւններ ունի կառավարութիւնը Երզնկայի շրջակայքում տեղի ունեցած դէպքերի մասին և ինչ միջոցներ է ձեռք առել մեր կառավարութիւնը կատարածների և սարսափների առաջն առնելու համար:»

Քըրզօն. «Կ. Պոլսի մեր դեսպանը, Էրզրումի հիւպատոսից ստացած տեղեկութիւնների հիման վրա, հաղորդում է, որ օգոստոսի 12-ի մօտերքը անյայտ աւազակներ յարձակվեցին մի թիւրք գնդապետի վրա և սպանեցին նրա պահակախմբից մի սպայ: Թիւրք վարչութիւնը վերագրել է յանցանքը հայերին և նրանց հալածելու համար ուղարկել է զինուորների մի ուժեղ գունդ, որ, ինչպէս պատմում են, կողոպտել է գիւղեր և վանքեր և կատարել է զանազան անգթութիւններ: Շատ հայեր կալանաւորված են Երզնկայում: Հայ ժողովրդի նշանաւոր ներկայացուցիչներ դիմել են Էրզրումի աբքեպիսկոպոսին, խնդրելով նրա աջակցութիւնը: Մեր դեսպանը հրաւիրել է Թիւրք կառավարութեան ուշադրութիւնը, և մեծ վիզիրը յայտնել է, որ արդէն հեռագրված է Երզնկայի տեղական կառավարութեան, որ բանտարկվածներին ազատ թողնեն:»

Զանտինդ. «Արդեօք վերացվեցին այն արգելքները, որ դրված էին Մուշի կողմերում՝ սասունցիներին օգնութիւն բաժանելու գործում:»

Քըրզօն. «Կ. Պոլսի մեր դեսպանը հաղորդում է, որ սասունցիներին նպաստ բաժանելը ոչ մի արգելքի չէ հանդիպում և մեր փոխ-հիւպատոս Համիսօն կարողանում է գործել Թիւրքերի հետ միաբան: Փող-հիւպատոսը նոր պա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

FINIS ARMENIAE

Յօդուած Էմիլ Դիլլօնի

(«Daily Telegraph»)

I

«Փորձանքը գալիս է այն մարդու գլխին, ով նրան սպասում է»,—սա չատ յարմար առած է, որ կապիտան Կիւտլը կարող էր առանց տատանվելու կարծել, թէ ս. Գրքից է: Ուրիշ ազգերը այդ առածը համարելով ոչ այնքան միխիթարական, կարող են վերագրել չար ոգուն, որը թշնամի է առաջադիմութեան և ատում է կատարելագործութիւնը:

Եւ այս բոլոր ազգերի մէջ ամենից առաւել Թիւրքիայի հայերն են, որոնք նոյնքան կարող են յուսալ Եւրօպայի օգնութեան վրա, որքան խեղդվող մարդը կարող է յոյս դնել դեռ ծովը չը մտած նաւի վրա, երբ արդէն ալիքները սպառնում են նրան կլանել: Գուցէ չատ զարմանալի երևայ, որ հայերը համբերութեամբ դիմանալով իրանց վիճակին դարերի ընթացքում, միշտ յուսալով փոքր ինչ բարեփոխել նրան, և ըստ երևոյթին չը յուսահատվելով յաճախակի անաջողութիւններից՝ չեն կարողանում համբերել և յուսով ապրել էլի մի քանի ամիս, մինչև որ խոստացածը իրագործվի... Բայց դա իրողութիւն է: Ով ծանօթ է այդ ժողովրդի, երկրի ու այն հեռաքրքիր պայմանների հետ, որոնց մէջ ներկայումս գտնվում են նրանք, դժուար չէ այդ ապացուցանել:

Դարերի ընթացքում հայերը անտանելի կառավարութեան ներքոյ են եղել, բայց հաւիւ հինգ տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ սկսեցին ընաջինջ անել նրանց: Առաջին պայմանի տակ ապրելով՝ մի ժողովուրդ կարող է սարսափների ենթարկվել. բայց վերջինի ժամանակ նա պէտք է բոլորովին անհետանայ: Թէ հայերը և թէ Թիւրքերը շատ լաւ են հասկանում այդ երկու սիստեմների մէջ եղած տարբերութիւնը, և մահմեդականները բնականաբար ջանք են անում ժամանակ վատակել—մի կարճ ժամանակ—քայքայման գործը լրացնելու համար, այն ինչ քրիստոնեաները աղերսում են իրանց արևմտեան եղբայրներին օրքան կարելի է շուտով հասցնելու այն օգնութիւնը, որ կարող են նրանք հասցնել: Որովհետև հարցը այժմ այլ ևս նրանում չէ, արդեօք երբ և իցէ մի բան պէտք է անվի թշուառ հայերին օգնելու համար, այլ նրանումն է՝ արդեօք կանվի մի բան նրանց այժմ, անմիջապէս օգնելու նպատակով: Մի քանի ամիս ևս, և մահմեդական ջրաղացում հայ ժողովուրդը այնպէս նուրբ փոշի կը դառնայ, որ անկարող կը լինի նոյն իսկ Թիւրքերին և քիւրդերին գրգռել—սա նոյնքան ճիշդ է, որքան այն, որ քաղաքական խնդիրները, մանաւոր նամակների նման՝ երկար անպատասխան մնալով, իրանք են պատասխանում: Մխիթարական է իմանալ, որ շուտ թէ ուշ օգնութիւնը կը գայ, բայց ցաւալի է մտածել, որ նա կարող է գալ միայն աչնան տաք քամու նման՝ չորացած և անհիւթ տերևների համար: Եւ այդ է այժմ հայերի սպասածը:

Եւ այն նախազգացումը, որ պետութիւնների միջամտութիւնը կը լինի նոյնպէս անօգուտ, որպէս ուշացած լուսնի լոյսը, հիմնովին փոխել է ժողովրդի տրամադրութիւնը, որը սկսել է արդէն ցոյց տալ ապարդիւն քաջութեան նշաններ, որ հետևանք է յուսահատութեան: Մի տարի առաջ նրանցից ամենաքաջերն անգամ զրկված էին կամքից, անզգայացած էին սարսափից. մարդկային ամեն զգայմունք բթացել էր Թիւրքի սպառնալիքներից կամ քրդի յարձակումներից... Այսօր պատկերը փոխվել է, թէև առանց ազատութեան յոյսի և առանց վնասելու կարողութեան: Վերջերումս ինձ այցելում էին, գրում էին և տեղեկութիւններ բերում աղերսելով՝—թէ մարդիկ և թէ կանայք այդպիսով վստահ էին ենթարկում այն բոլորը, ինչ որ ունէին և սիրում էին,—այնպիսի մարդիկ, որոնք մի քանի ամիս առաջ աւելի լաւ կը համարէին մեռնել լռութեան մէջ, քան գրգռել իրանց իշխանաւորներին՝ յարաբերութիւններ սկսելով մի օտարականի հետ: Այն բազմաթիւ և հետաքրքիր աղերսագրերից մէկը, որ ինձ ներկայացրել են՝ խնդրելով որ դրանք հաղորդվեն «մարդասէր և ազնիւ Անգլիայի ժողովրդին», ստորագրել են Խնուսի գաւառի 306 նշանաւոր բնակիչները, որոնցից ամեն մէկը կամ բոլորը դրա շնորհիւ կարող են աքսորվել հայրենիքից, գուցէ և զրկվել կեանքից:

Մի քանի կտորներ այդ պարզ դոկումենտից,—որը մասամբ յիշեցնում է Պարագվայից Անգլիայի թագուհուն ուղարկված մի նամակը,—կարող են հետաքրքիր լինել: «Յանուն քրիստոնէութեան և մարդկութեան մենք աղաչում ենք ուշադրութիւն դարձնել մեր տանջանքների վրա. մենք խնդրում ենք ձեզ չտալ՝ ազատելու մեզ մահմեդականների լծից, քանի որ մենք դեռ բոլորովին չենք անհետացել և դուք ականատես չէք եղել մի ժողովրդի ոչնչանալուն, որը տասն և վեց դար չարունակ զարմանալի կերպով պահպանել է իր ազգութիւնը և հաստատ պահել է իր կրօնը, չը նայած հեթանոսութեան խստութիւններին և իսլամի ֆանատիկոսութեանը: Մենք այժմ, վերջապէս, մահուան տագնապի մէջ ենք: Զրկված մարդկային ամենատարրական իրաւունքներից, մեր դաչը, մեր սպասիւը, մեր կեանքը գտնվում են նրանց ձեռքերում, որոնք մեզ ատում են:

«Քիւրդերը չարունակ յարձակվում են մեր գիւղերի վրա, կողոպտում են մեր դաչտերը, փախցնում մեր հօտերը, այրում մեր տները, անպատուում մեր կանանց և վիրաւորում մեր աղջիկներին ու քոյրերին, համոզված լինելով, որ ինքը՝ կառավարութիւնը, որը պարտաւոր է մեզ պաշտպանելու, նրանց անպատիժ կը թողնի և նոյն իսկ աւելի էլ կը խրախուսի: Սա մի փաստ է, որը հաւասարապէս յայտնի է հիւպատոսներին, փոխ-հիւպատոսներին, միսիոնարներին և առհասարակ բոլոր եւրօպացիներին, որոնք մեր մէջ ապրել են: Ժամանակ առ ժամանակ մենք մեր դրութեան մասին տեղեկացրել ենք քաղաքակրթված Եւրօպային՝ օտար հիւպատոսների և թղթակիցների միջոցով: Բայց մեր աղաղակները միայն դատարկ ձայներ էին: Հարկաւոր էր Սասունի կոտորածը, որ մեր տանջանքների վրա ուշադրութիւն դարձնէին: Ցիրաւի, այս դէպքը մեծ ազդեցութիւն ունեցաւ, և մենք լսում ենք, որ մարդասէր եւրօպացիների զգայուն սրտերը լի են ցաւակցութեամբ դէպի մեր թշուառ ժողովուրդը: Բայց կը մեկնեն արդեօք նրանք իրանց ձեռքերը՝ մեզ ազատելու և պաշտպանելու համար: Եթէ ոչ, այդ համակրութիւնը լոկ ծաղր չի՞ լինի արդեօք:

«Մենք հաստատապէս հաւատացնում ենք ձեզ, որ Սասունի կոտորածը միայն մի կաթիլ է հայկական արեան այն ովկիանոսում, որ թափվում է ասիճանաբար և լուռ, ամբողջ կայսրութեան մէջ՝ վերջին ռուս-Թիւրքական պատերազմից յետոյ: Ամեն տարի, ամեն ամիս, ամեն օր անմեղ մարդիկ, կանայք և երեխաներ գնտակահարվել, մորթվել, կամ սպանվել են իրանց տներում և դաչտերում, սարսափելի դիւական միջոցներով տանջվել են նեղ և խոնաւ բանտերում, կամ փտել են աքսորավայրերում Արաբիայի կիզիչ արեգակի տակ: Այդ երկար և սարսափելի ողբերգութեան ընթացքում ոչ մի ձայն չէ բարձրացել մեզ ցաւակցութիւն յայտնելու, ոչ մի

ՅԻՍՍՈՒՆ ԴՈՒՔՈՆՕՎԻՉ ՎՈ ՅԵՄՈՒ ՑՍԵՈՒ

Ամերիկայի «Нов. Обозрѣніе» լրագրին մեջ տպուած է հետևեալ հոդուածը։ «Daily News» լրագրի մեջ ամենայն ինչ ասուած է, որ մեր ընթերցողներին ծանօթ է։

Ցարական կառավարութիւնը Ռուսաստանի հարաւային գաւառներուն մեջ ամենամեծ դերը խաղցեր է հրեաներուն դեմ։ Ամենամեծ սարսափներ, ամենամեծ ոճիրներ գործուեցան հրեաներուն դեմ։

Ֆեստիվալ դաշնակահարների

—

Ուրբաթ, մայիսի 27-ին, ժամը 8-ին, Ֆեստիվալ դաշնակահարների՝ Ալեքսանդրի, Ալեն Ալեքսանդրի, Ալեն Ալեքսանդրի, Ալեն

բաթ կէս օրին հաղորդուեցաւ դեսպաններուն, որոնք հեռագրեցին զայն իրենց պետութեանց։ Դեռ մինչև աս առտու, երկուշաբթի, չի տեղեկացանք, թէ ինչ պատասխան եկած է, կամ թէ պատասխան եկած է։

Նոյն շաբաթ օրը պատրիարքն ալ Թարապիա երթալով քանի մը ժամ տեսակցեցաւ Անգլիոյ դեսպանին հետ. թէ ինչ խօսեցան դեռ յայտնի չէ։ Նոյն օրը պատրիարքը վերադարձին Պէշիկթաշ գնաց պատարագելու կիրակի օրը. ամբողջ օրը հոն անցուց. այսօր ալ ուրիշ տեղ մըն է, անանկ որ տեսնել կարելի չէ եղած. միայն թէ շաբաթ իրիկուն ուրախ դարձած է։

Երկու օր ետքը մեկնող թղթատարով կը գրեմ։

Աս առտու թիւրք թերթերը կը գրեն, թէ Մամբրէն սպաննողը պահողները ձերբակալուած են. ինչ կըլլայ։ Ուրիշ աւելի ծանր լուր մըն ալ կը գրեն. Համբարձումի Ուղուրլուեանը սպաննողը ձերբակալուած է եղեր. ռուսոսթոցի Գալուստ անուն կօշկակար մըն է եղեր։ Պատճառներ ունիմ կարծելու, թէ աս վերջին լուրը բոլորովին սխալ ըլլալու է. բայց կը քննենք։ Թիւթիւնճիէֆի սպաննիչին համար ալ սանակ սուտ լուրեր տարածեցին թիւրք թերթերը, ապահովելու համար իրենց ժողովուրդը։

***

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, օգոստոսի 28-ին

Սուլթանը վերջապէս ընդունեց իր ամբողջութեամբ մայիսի 11-ի ծրագիրը. բայց լորդ Սալիսբիւրիի աւելացրած մասերը մերժել է։

Պաշտօնապէս արդէն հաղորդել են դեսպաններին այս որոշումը, որ հեռագրված է կաբինէտներին։

Տեսնենք, պիտի համաձայնէն եւրոպական պետութիւնները։ Ինչպէս յայտնի է, լորդ Սալիսբիւրին պահանջում է, որ Կ. Պոլսում հաստատուելիք յանձնաժողովի մէջ 3 եւրոպացի անդամ լինեն՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, այլ և բարձրագոյն կօմիսէրը սուլթանի կապերից աղատ լինի։

Ս.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բարձրագոյն բարեհաճութիւն խնդրեց՝ կանտ փիլիսոփայի ձեռագիրները, որոնք գտնվում են Իւրեվի համալսարանում, ժամանակաւորապէս Բերլին ուղարկելու համար։ Այդ ձեռագիրները խնդրել է Պետերբուրգի գերմանական դեսպանը, որպէս զի նպաստի Բերլինի գիտութիւնների ակադէմիային, որը մտադրութիւն ունի հրատարակել Կանտի գրուածքների լիակատար ժողովածուն։

Արտաքին գործերի մինիստրը երէկ երկոյեան ճանապարհ ընկաւ Կոնստէնկէվիլ (Ֆրանսիա)։

ՄՕՍԿՎԱ, 3 սեպտեմբերի։ Առանձին յանձնաժողովը, վարչութեան համաձայնութեամբ, առաջարկում է դումային՝ միջնորդել, որպէս զի Նոցա Մեծութիւնները, սրբազան թագադրութեան ժամանակ, բարեհաճեն բաղդաւորացնել իրանց այցելութեամբ Մօսկվայի քաղաքային դուման, քաղաքի մատնակցութիւնը չը սահմանափակել փողոցները զարդարելով և լուսաւորութեամբ, այլ յաւերժացնել այդ հանդիսաւոր անցքը՝ հիմնելով մի ապաստան 200,000 ր. արժողութեամբ, խնամատարութեան կարօտ անձանց համար։ Այդ հանդէսներում մատնակցութիւն ունենալու համար որոշված է 450,000 բուբլի։

ՎԻԵՆՆԱ, 3 սեպտեմբերի։ Կ. Պոլսից հաղորդում են, որ թիւրքաց կառավարութիւնը դիտաւորութիւն ունի արձակել նորերս զէնքի կոչված բէդիֆի տասերկու գնդերը, որովհետև գործերի դրութիւնը Մակեդոնիայում այլ ևս երկիւղալի չէ։

ՍՕՖԻԱ, 3 սեպտեմբերի։ «Мир» լրագիրն ասում է, որ Մակեդոնիայում ազգաբնակչութիւնը ներշնչվում է արտասահմանից, և այդ պատճառով նահանգի բոլգարական աղգաբնակութիւնը հալածանքի է ենթարկվում։

Կ. ՊՕԼԻՍ, 3 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 2-ին խէդիվը ճանապարհ ընկաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Թագաժառանգ Ցեսարեվիչը և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնայի հետ «Полярная Звѣзда» նաւով Կոպենհագէնից ճանապարհ ընկան դէպի Լիբավա։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ, 3 սեպտեմբերի։ Դումայի որոշեց, Նոցա Մեծութիւնների պսակադրութիւնը արժանայիշատակ դարձնելու համար, տալ իւրաքանչիւր տարի 5000 ր. բէալական դպրոց պահելու համար։

ՎԻԼՆՕ, 3 սեպտեմբերի։ Այստեղ բացվեց գիւղատնտեսական ցուցահանդէս։

ՎԻԵՆՆԱ, 3 սեպտեմբերի։ Կոմս Բադէնի (լեհ) յանձն առաւ կազմել նոր մինիստրութիւն։

ՊԱԼԷՐՄՕ, 3 սեպտեմբերի։ Կառավարութիւնը հրամանագրեց կալանաւորել յեղափոխական սոցիալիստական կուսակցութեան 12 պարագլուխներին, նոյնպէս և «Biscorsa» լրագրի խմբագրին և աշխատակիցներին։ Վերոյիշեալ լրագիրը դադարեցրած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սեպտեմբերի 1-ին. երկրորդ ներքին փոխառութեան խաղարկութեան հետևեալ տոմսերն են տարել գլխաւոր ր. գումարները։

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գումարը
13,248	39	200,000	12,733	3	1,000-ական
1,245	30	75,000	1,884	40	
2,117	37	40,000	12,271	11	
13,060	50	25,000	1,320	11	
17,429	18	10,000	15,662	7	
1,880	20	10,000	248	18	
7,972	30	10,000	11,455	17	
14,417	7	8,000-ական	16,294	12	
8,071	18		8,811	27	
16,267	9		8,593	17	
12,115	19		5,002	19	
13,300	16		2,576	28	
7,706	11	5,000-ական	17,761	26	
1,730	9		11,228	24	
19,034	38		10,532	44	
9,610	30		6,271	47	
6,270	2		17,107	30	
10,468	22		4,801	35	
3,420	42		1,229	36	
17,181	27		7,377	25	

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 1-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	75 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	25 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	67½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպոններ — .	148 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 —	7%
4% պետական բէնտա	99⅛ »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	161 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	280 »	— »
— — երկրորդ —	240 »	— »
Գրաւ. թղթ. — — .	215 »	25 »
5% պետական երկաթուղ. բէնտա	101⅜ »	— »
4% ներքին փոխառութեան . . .	98 »	25
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	25 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	100⅞ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	102 »	— »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	75 »
Օդէսայի — —	101 »	25 »
Թիֆլիսի — —	99⅝ »	— »

Խմբագիր և հրատարակիչ՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, 1895, մասնակցութեամբ Լ. Ֆ. Ֆէրարիզի, Ն. Դ. Կովալենսկու, Մ. Լ. Պրէսմանի, Ն. Ն. Մակարովի և Դումայի կը կայանայ

ԿՕՆՑԷՐՏ

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Սուզանաճեանի և Լանկօի երաժշտական մագազիններում և Ծատուրովի լամպային մագազինում, իսկ կօնցերտի օրը՝ թատրօնի կասսայում.

Սկիզբն է 8½ ժամին։

Պատասխանատու—կառավարիչ՝ Արսկի։

(№ 101) 1—3

Հարկաւոր է ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ օրիորդաց դպրոցի համար մի ցէնզով ՎԱՐԺՈՒՀԻ կամ ՈՒՍՈՒՑԻՉ։ Պայմանների մասին դիմել «Մուրճի» խմբագրատուն։

(№ 101) 1—3

Մ. ՄՈՒՐՏԱԳ

Շարունակում է ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ դասեր տալ. երաշխաւորում է կանոնաւոր արտասանութիւն։ Հասցէն՝ Լաբօրատօրնայա, № 4, բաղի մէջ։

(№ 101) 1—3

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Գրիգորիս Երզնկեանցի

Վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում։

Գինն է 1 բուբլի

(№ 76) 2—2

Օգոստոսի վերջին լոյս պիտի տեսնէ հանգուցեալ ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

„ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ“

Խնդրում եմ այն անձանց, որոնց մօտ գտնվում են հանգուցեալի „բառերի ցուցակը“ և „Այբենարանը“ զրքոյկները, ուղարկել ինձ՝ անմիջապէս տպագրութեան յանձնելու։

„Ընթերցարանը“ ապպարողները կարող են դիմել այս հասցէով Шуша, книжный магазинъ Баграта Теръ-Саакянъ.

(№ 97) 2—4

Մեծ Արժանաւորութեան

ՀՈՏԱԻԷՏ ՋՐԵՐ

„Պարսկական Եասաման“

Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն

„Պարսկական Եասաման“

Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եասաման“

Սապոն „Պարսկական Եասաման“

Պօմադա „Պարսկական Եասաման“

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանաը ձրի։

(ամ. 30) (№ 73) 4—12

ՑԵՆԶ ՈՒՆԵՑՈՂ

Մի երիտասարդ, որ վարել է մի քանի տարի դաւառական քաղաքներում ուսուցչի պաշտօն, ցանկանում է դասեր ունենալ։ Գիտէ և հայկական ձայնագրութիւն։

Հասցէն՝ Михаилъ Сергѣевичу Шарбабчеву, Тифлисъ, Темныя ряды, собствен. д. № 2.

(№ 97) 4—5

Մի քանի տարի պաշտօն վարած ՑԷՆԶԱՒՈՐ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է տեղ ունենալ հայոց դպրոցներում։ Պայմաններով դիմել՝ Ахалцыхъ. Учителю Григоряну, до востребованія.

(№ 101) 1—3

ԿԷՕԼԷՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՕՍԼԱ

Ինչպէս չոր, այնպէս և՝ փայլ տալու համար պատրաստի հեղուկ տեսակը,

այլ և

ԿԷՕԼԷՐԵԱՆ ԼԵՂԱԿ

ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՀԱՄԱՐ

իր բարակութեամբ և յատկութիւններով գերազանցում է նոյն տեսակի ինչպէս ռուսաց, այնպէս և արտասահմանի այդ տեսակի արդիւնաբերութիւնները։

Վաճառվում է

ԱՄԵՆ ՏԵՂ. ԵՒ ԲՈԼՈՐ

յայտնի առևտրականների մօտ։

(№ 86) 2—2

ՕՐԲԱԶԱՐԻ Հայոց Ծխական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչ՝ մինը ձայնաւոր։ Տարեկան վարձ 500 և 400 ր.։

Մեր հասցէն. Армянскъ-Базаръ, Тав. губ., Попечит. Армяно-Базарск. армянскаго приходск. училища.

(№ 83) 7—10

ԱԶԴ

ՂԶԼԱՐԻ շրջանում գտնվող Ղարաջալիլ գիւղի միդասեան դպրոցի համար հարկաւոր է ՑԷՆԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, տարեկան ռօճիկ երկուսին միասեղ՝ վեց հարիւր բուբլի, բնակարան։ Ծառայ և վառելափայտ։

Դպրոցական եկեղեցեաց՝

Ալէքսիանոս քահ. Աստուածատուրեանց

Ղզլար (№ 94) 4—6

ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻ, երեքը ցենզաւոր, իսկ մէկը առանց ցենզի, ցանկանում են ծառայել դաւառում միասին կամ առանձին։ Դիմել՝ Тифлисъ, Сололаки, Орловская улица, № 28 г. Бабіяну.

(№ 95) 3—3

ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ

(Тифлисъ, Гудовича ул., д. № 8, 3-րդ գիմնազիայի պանսիօնի նախկին բնակարանը)

Բաղկանում է ԵՐԿՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ և ՄԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻՑ։ Աշակերտներ ընդունվում են բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու՝ գիշերօթիկներ, ցերեկօթիկներ և երթևեկներ. բացի այդ՝ պանսիօնում ընդունվում են նաև աշակերտներ սերտողութեամբ (репетиціей) հանդերձ՝ պետական դպրոցներից։

Ընդունելութիւնը սկսվել է օգոստոսի 21-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։

(Ե. շ.) 4—4

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(Ե. շ.) № 62 13—25

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Сентября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.